



ԱՆԳՈՒՄ ՍԻՆՕԳԻ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՆՅԻ

ՅՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՁԵԱՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՅ

ի 12ն Հոկտեմբերի առաւօտեան ժամը 6՝ ին

ՀԱՆԳԵԱՒ Ի ՏԷՐ.

Հանգուցեալը 1839—1843ը ուսումն Երևանայ Հոգևոր Թեմական դպրոցում առնելուց յետոյ՝ ընդունելով Հոգևորական կոչումն՝ 1847 և 1848 թ. նոյն թեմական դպրոցում Հայերէն լեզուի դասաւարտութեան պաշտօն է վարել. 1849 ին ձեռնադրուել է քահանայ. 1854 և 1855 արևելեան պատերազմին՝ ըստ կարգադրութեան Սինոյի Երևանեան րանակի Կրգ գնդում նշանակուել է զինուորականաց քահանայ. 1857 ին, իւր ամուսնոյ մահչից յետոյ, իւր խնդրին համեմատ ընդունել է վեղար արեղայութեան և ըստ կարգադրութեան Սինոյի նշանակուել է կառավարիչ Հոգևոր գործոց Սուրբաւուայ գաւառակի որ կատարել է 1857 ի Յունիսի 14 ից—1858 ի Նոյեմբերի 5ը և իւր խնդրին համեմատ արձակուելով յիշեալ պաշտօնից՝ նոյն Նոյեմբերի 28 ին նշանակվում է Արարանու գաւառակի Հոգևոր գործոց քննիչ. Ըստ կարգադրութեան Թիֆլիզի Հայոց Առնսիստորի՝ 1859 թուի Ապրիլի 12 ին կարգուել է Սղնախի և Թեւաւի Հոգևոր գործոց կառավարիչ, և 1860 թուի Յունվարի 20 ին կարգուել է անդամ՝ նոյն Առնսիստորի. ըստ պատուիրանի հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթողիկոսի, նոյն թուի Յունիսի 27 ին կարգուել է կառավարիչ Հոգևոր դպրոցին Սղնախի և այս պաշտօնը վարել է մինչև 1862 թիւ Օգոստոսի 2-ը. Ըստ կարգադրութեան հանգուցեալ ի Տէր Մատթէոս կաթողիկոսի 1863 թիւ Օգոստոսի 7-ին ստացիլ է մասնաւոր վարդապետութիւն ըստ կոնդակի նոյն հոգելոյս հայրապետի նոյն 1863 թիւ Յուլիսի 29-ին կարգուել է աւագ անգամ՝ Աստրախանի Հայոց Առնսիստորի և նոյն Առնսիստորի կարգադրութեամբ նշանակուել է հոգարարձու Հայոց Սեմինարիայի և վարել է նոյն պաշ-

տօնը մինչև 1865 թիւ Գեկտեմբերի 1. նոյն թիւ Հոկտեմբերի 6 - ին կարգուել է Աստրախանու Աղարաբեան զպրօցի կրօնուսոյց. 1866 թիւ 27 Օգոստոսի կարգուել է գանձապետ նոյն Կոնստանտինի, 1868 թուին Մարտի 6 - ին արձակուելով Կոնստանտինի անդամութեան ու գանձապահութեան պաշտօններէից և Աղարաբեան զպրօցի ուսուցչութեան պաշտօնից՝ նոյն 1868 թուի Յունիսի 27 - ին ըստ կոնդակի հանդուցեալ ի Տէր Գէորգ Գ. Կաթուղիկոսի կարգուել է աւագ անդամ Աարաբաղու Կոնստանտինի. և առ բացակայութեամբ վիճակաւոր Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանի՝ 1868 թիւ Օգոստոսի 15 - ից մինչև 1870 թիւ Փետրվարի 10 - ը վարել է առաջնորդական փոխանորդի պաշտօն՝ Աարաբաղի թեմում, և ըստ խնդրոյ իւրոյ արձակուելով յիշեալ պաշտօններէից՝ ըստ առաջարկութեան հանդուցեալ ի Տէր Գէորգ Գ. կաթուղիկոսի նոյն թուի Մարտի 20 - ին բարձրագոյն հաստատութեամբ կարգուել է անդամ Սինօղի. 1872 թուի Մարտի 26 ին բարձրացել է յաստիճան եպիսկոպոսութեան. 1875 թիւ Հոկտեմբերի 30 - ին իւր խնդրին համեմատ ի գիւտ առողջութեան ստանձնեց Նախիջևանի Կարմիր վանքի վանահայրութեան պաշտօնը, և այս պաշտօնը վարեց մինչև 1882 թիւ Գեկտեմբերի 22 ը և հրաւիրուեց էջ միածին՝ շարունակել Սինօղի անդամութեան պաշտօնը. 1885 - ին Օգոստոսի 26 - ին ի կողմանէ հոգևորականութեան կարգուեց հրաւիրակ առ Տէր Մակար Սրբազնագոյն Կաթուղիկոսն ազգիս և ուղեկից գտաւ նորին Վեհափառութեան Քիչնեից մինչև ի Մայր Աթոռս:

Հանդուցեալը ի քահանայութեան՝ 1856 ի Մարտի 20 - ին հանդուցեալ ի Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսից ջերմեանոյն ծառայութեան համար փարձատրուել է քահանայական լանջական խաչով.

1854 և 1855 թուին լինելով պատերազմում՝ փարձատրուել է Վրչաղիմիրի ժապաւէնի բրօնզեայ խաչով և Ս. Գէորգի ժապաւէնի բրօնզեայ մեդալով. 1860 թուի Ապրիլի 23 ին Թիֆլիզի վիճակաւոր Սարգիս արքեպիսկոպոսից ստացել է ծաղկեայ փիլոն. Հանդուցեալ ի Տէր Մատթէոս կաթուղիկոսի կոնդակով 1860 թիւ Յունիսի 25 - ին փարձատրուել է փարզապետական լանջական ականակու խաչով. ըստ առաջարկութեան Աստրախանի վիճակաւոր Մատթէոս արքեպիսկոպոսի. 1866 թուի Մարտի 27 ին ստացել է Ս. Աննայի Բ. աստիճանի շքանշանը.

Աստրախանի կոնստանտինի գանձապահութիւնը հաւատարմութեամբ վարելուն համար՝ 1867 թուի Նոյեմբերի 30 - ին ստացել է Սինօղից գօհունակութեան թուղթ. և Աստրախանի Աղարաբեան զպրօցում արգիւնաւոր կրօնուսուցչութեան համար Կազանի շրջանի ուսումնարանաց հոգարարձուից ստացել է գօհունակութեան թուղթ.

1872 թ. Մարտ 26 եպիսկոպոսական աստիճանի հետ փարձատրուել է հանդուցեալ ի Տէր Գէորգ Գ. Կաթուղիկոսից եպիսկոպոսական պնագիւթով և մատանեաւ.

Հանգիստ և երկնից արքայութիւններ մաղթում Հանդուցելոյն.